ԲՍԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(2025-2028)

Տեսլական

Նպատակը

- Նպաստել Հայաստանի կայուն տնտեսական աճին և կանաչ տնտեսության անցմանը
- Բարձրացնել Բանկի մրցունակությունն ու ճկունությունը
- Ձեռք բերել մրցակցային առավելություն՝ որպես ESG սկզբունքները վաղ ընդունող
- Ամրապնդել վստահությունը և հանդես գալ որպես վստահելի գործընկեր հասարակության մեջ:

Հիմնական ոլորտները

- Կլիմայի փոփոխության մեղմում
- Ջրի Կայուն Կառավարում
- Աշխատանքային միջավայրի բարեկեցություն և աշխատանքի ստանդարտներ
- Կառավարում և հանրության վստահություն

Ռազմավարական նպատակներ և թիրախներ

1. Կլիմայի փոփոխության մեղմում

Թիրախ. *Դառնալ կլիմայական չեզոք բանկ և աջակցել Հայաստանի անցմանը դեպի ցածր ածխածնային տնտեսության:*

Դրական ազդեցություն

Գործողություններ, որոնք ստեղծում են բնապահպանական կամ սոցիալական արժեք՝ հիմնականում իրականացվելով հաճախորդների հետ ուղղված նախաձեռնությունների միջոցով:

2025

- Ներդնել Կանաչ վարկավորման ընթացակարգ և վերապատրաստել աշխատակիցներին,
- Ստանալ 2-րդ կողմի կարծիք Կանաչ Պարտատոմսերի Համակարգի համար,
- ESG-ի շրջանակում շարունակել արտաքին դասընթացները ՓՄՁ-ների համար:

2026

- Հաշվելարկել կանաչ վարկերի պորտֆելի չափը ընդհանուր պորտֆելում,
- Մշակել և սահմանել թիրախներ միջազգային ֆինանսավորման ներգրավման ուղղությամբ՝ վերականգնվող էներգիայի և ցածր ածխածնային արդյունաբերությանն աջակցելու համար:

2027

- Մշակել և սահմանել թիրախներ՝ նվազեցնելու արտանետումները և հասնել հնարավոր ածխածնի չեզոքության մինչև 2035 թվականը:

Բացասական ազդեցություն

Գործողություններ, որոնք ուղղված են ESG-ով կապված ռիսկերի նվազեցմանը կամ կանխարգելմանը, հատկապես բնապահպանական կամ սոցիալական վնասների պարագայում:

2026

- Մշակել և ներդնել կլիմայի հետ կապված ֆիզիկական ռիսկերի կառավարման համակարգ

2027

- Հաշվետվություն տրամադրել կլիմայի հետ կապված ֆիզիկական ռիսկերի վերաբերյալ

Ներքին կառավարման շրջանակ

Գործողություններ, որոնք կապված են ներքին գործունեության, անձնակազմի, արտանետումների և կառավարման համակարգերի հետ:

2026

- Հրապարակայնորեն զեկուցել Scope 1 և Scope 2 արտանետումների մասին,
- Բարելավել ESG-ի շրջանակի դասընթացների նյութերը ըստ անհարժեշտության:

2. Ջրի Կայուն Կառավարում

Թիրախ. *Խթանել ջրի պատասխանատու օգտագործումը և աջակցել գյուղատնտեսության ոլորտի ճկունությանը:*

2026

- Սահմանել ջրի պատասխանատու օգտագործման վարկային պորտֆելի թիրախ,
- Կազմակերպել սեմինարներ ՓՄՁ-ների և գյուղատնտեսական հաճախորդների համար ջրի հետ կապված մարտահրավերների վերաբերյալ, բարձրացնել հաճախորդների շրջանում ջրի ռիսկերի մասին իրազեկությունը,
- Ոռոգման համակարգի բարելավման ազգային ծրագրերի շրջանակում տրամադրել վարկեր և հնարավորության դեպքում նպաստել ծրագրի բարելավմանը:

3.Աշխատանքային միջավայրի բարեկեցություն և աշխատանքի ստանդարտներ

Թիրախ. *Բարելավել խոցելի խմբերի ֆինանսական ներգրավվածությունը և ապահովել աշխատակիցների բարեկեցությունը:*

2025

- Գնահատել աշխատավայրի բարեկեցությունը և հոգեբանական անվտանգությունը մակարդակը,
- Գնահատել մարդու իրավունքների և աշխատանքային քաղաքականության՝ ԱՄԿ-ի (Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն, ILO) հիմնական կոնվենցիաներին համապատասխանությունը:

2026

- Սահմանել կառավարման ոլորտում բազմազանության և կայունության ուսուցման հստակ նպատակներ:
- Բարելավել աշխատավայրի բարեկեցությունը և հոգեբանական անվտանգությունը՝ անհրաժեշտության դեպքում:
- Համապատասխանեցնել մարդու իրավունքների և աշխատանքի քաղաքականությունը ԱՄԿ-ի հիմնական կոնվենցիաներին՝ անհրաժեշտության դեպքում:

4. Կառավարում և հանրային վստահություն

Թիրախ. *Բարձրացնել թափանցիկությունը և շահագրգիռ կողմերի հետ վստահությունը*

2025

- Մշակել Ակբա Բանկի խմբի ESG քաղաքականություն, որը կհամապատասխանի բաժնետերերի և կարգավորողի պահանջներին՝
    - տրամադրել «Ազդեցության մոնիտորինգի հաշվետվություն» և «Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի հաշվետվություն» ամենամյա պարբերականությամբ
    - Ծանուցել ԲՍԿ ղեկավարների կազմի փոփոխությունների դեպքում
    - Ծանուցել ԲՍԿ հայցերի և միջադեպերի առաջացման դեպքում
    - Հետևել և պահպանել բնապահպանական և սոցիալական պահանջները
- Վերահսկել և գնահատել կարգավորողի ակնկալիքները՝ ESG-ի և կլիմայական ռիսկերի շրջանակում:
- Պարբերաբար զեկուցել Կայուն զարգացման (ESG) գործունեության մասին Ռազմավարական կոմիտեին:
- Ապահովել Կորպորատիվ կառավարման կոդեքսում սահմանված բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) պահանջների և չափանիշների կատարմանը համապատասխանությունը:

2026

- Հրապարակել Կայուն զարգացման հաշվետվություն,
- Սահմանել կլիմայական ռիսկերի կառավարման պատասխանատուներ:

Ճանապարհային քարտեզ

Փուլ 1. Կարճաժամկետ գործողություններ (2025)

- Մշակել ESG գործողությունների պլան,
- Ներդնել ESG քաղաքականություն և ապահովել ընդհանուր իրազեկում:
- Ներդնել կանաչ վարկավորման ընթացակարգ:
- Կազմակերպել երկրորդ կողմի կարծիքի ստացման գործընթաց և պատրաստել կանաչ պարտատոմսերի թողարկման աշխատանքները:
- Իրականացնել (կամ շարունակել) Բանկի կողմից ESG սկզբունքների վերաբերյալ իրազեկման գործունեություն:
- Վերապատրաստել աշխատակիցներին ESG- վերաբերյալ ընդհանուր իրազեկման և մասնագիտական դերերին վերաբերող հմտությունների շրջանակում:
- Իրականացնել PCAF-ին անդամակցման գործընթացը և նշանակել համագործակցության պատասխանատուներ:
- Գնահատել աշխատավայրի բարեկեցության և հոգեբանական անվտանգության մակարդակը:
- Համեմատել մարդու իրավունքների և աշխատանքային քաղաքականությունը ԱՄԿ-ի հիմնական կոնվենցիաների ու Բանկի իրավական ակտերի հետ:
- Կազմակերպել առնվազն երկու դասընթաց՝ NFS-ի շրջանակում:
- Հատկացնել բյուջե և այլ անհրաժեշտ միջոցներ:
- Բացահայտել հիմնական շահակից խմբերը (օրինակ՝ հաճախորդներ, աշխատակիցներ, կարգավորող մարմիններ, ՀԿ-ներ, ներդրողներ), ընտրել նրանց հետ հաղորդակցության ճիշտ ձևերը՝ հարցումներ, հարցազրույցներ, քննարկման հարթակներ, թվային հետադարձ կապի ձևեր, և մշակել դրանց օգտագործման ներքին կարգեր ու ձևաթղթեր:
- Մշակել գործողությունների պլան՝ Կորպորատիվ կառավարման կոդեքսում սահմանված բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ESG) պահանջներին և չափանիշներին համապատասխանությունն ապահովելու կամ չհամապատասխանելու դեպքում հիմնավոր բացատրություն ներկայացնելու համար:

Փուլ 2. Միջնաժամկետ գործողություններ (2026 - 2027)

- Հետևել կատարողականին և կարգավորել բիզնես մոդելները՝ արտացոլելու ESG հավակնությունները,
- Մշակել հաշվետվական համակարգեր՝ «ESG KPI»-ների նկատմամբ առաջընթացը վերահսկելու համար,
- Կազմակերպել շահագրգիռ կողմերի կառավարման նախաձեռնություններ,
- Գնահատել կարգավորողի կողմից ESG զարգացումները և ինտեգրել դրանք ռազմավարությունների մեջ,
- Բարելավել SS ենթակառուցվածքը՝ ESG տվյալների, Կանաչ վարկային պորտֆելների արդյունավետ հավաքագրման համար
- Վերլուծել շուկայի հնարավորությունները վերականգնվող էներգիայի և ցածր ածխածնային արդյունաբերության,

- Իրականացնել կլիմայի հետ կապված ֆիզիկական ռիսկերի ընթացակարգի ներդրում, ռիսկերի գնահատում և հաշվետվության տրամադրում:

Փուլ 3. Երկարաժամկետ գործողություններ (2028 և հաջորդող տարիներ)

- Գնահատել և կատարելագործել ESG ռազմավարությունը՝ հիմնվելով փորձի և տվյալների վրա,
- Ստեղծել ռազմավարական գործընկերություն արտաքին գործընկերների հետ,
- Իրականացնել ESG ռազմավարությունը հաճախորդների հետ հարաբերությունների և արտաքին հաղորդակցության մեջ:

Հաջողության հիմնական գործոնները

Առաջնորդության բարձր մակարդակ

- Իրականացնել ESG թեմայով դասընթացներ բանկի ղեկավար կազմի համար՝ ապահովելու ESG-ի անցումային փուլի արդյունավետ կառավարումը:
- Խթանել կայունության պրակտիկայի վերահսկողությունը բարձր մակարդակի շրջանում:

Աշխատավայրում իրազեկում

- Օգտագործել ներքին հաղորդակցման ուղիները՝ ESG-ի նախաձեռնությունների մասին նորությունները տարածելու համար,
- Անցկացնել մասնագիտացված ուսուցում բարձրագույն կառավարման և ԲՍԿ ռիսկերի կառավարման պատասխանատուների համար:

Ռեսուրսների բաշխում

- Ապահովել համապատասխան ռեսուրսներ ESG նախաձեռնությունների իրականացման համար, ներառյալ մարդկանց, հմտությունները, SS ենթակառուցվածքը և կապիտալը:

Իրականացման պլան

Կառավարման կառուցվածք

- Ստեղծել հաշվետվողականություն ESG-ի նպատակների համար կառավարման և խորհրդի կառույցներում,
- Ինտեգրել ESG-ի նկատառումները Բանկի որոշումների կայացման գործընթացներում:

Շահագրգիռ կողմերի ներգրավում

- Կազմակերպել իրազեկման միջոցառումներ և վերապատրաստման դասընթացներ հաճախորդների, աշխատակիցների և շահագրգիռ կողմերի համար,
- Համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ՝ համապատասխանեցնելու համաշխարհային ESG ստանդարտներին:

Մոնիտորինգ և հաշվետվողականություն

- Պարբերաբար գնահատել առաջընթացը դեպի սահմանված թիրախները,
- Հասարակայնորեն զեկուցել ESG-ի նախաձեռնությունների և արդյունքների մասին՝ թափանցիկությունը պահպանելու համար

Կարողությունների զարգացում

- Վերապատրաստել աշխատակիցներին ESG սկզբունքների շրջանակում և ինտեգրել կայունությունը հիմնական բանկային ծառայությունների մեջ: